ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ք. Երևան, 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (+ 374 10) 44-34-80, (+ 374 60) 37-26-56
Հեռ.՝ (+ 374 10) 44-29-04, (+ 374 60) 37-77-37

Ե 40/11 - 8657
«25» 12 20 25 թ.

**«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ՝
ԳԱՅԱՆԵ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ**

**ՀՀ Արարատի մարզ, գ. Ոստան, Երևանյան 13
էլ.հասցեն՝ architools@mail.ru
Հեռ. 096-59-50-10
ՀՎՀՀ 04234306**

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայություն) և «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 22.04.2025թ.-ին՝ կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-25/6» ծածկագրով գնման պայմանագիր (Այսուհետև՝ Պայմանագիր)՝ «ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման վերաբերյալ», որի ընդհանուր գումարը կազմել է 1.980.000 ՀՀ դրամ: Պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կողմից թույլ են տրվել պայմանագրի պարտադիր պայմանների խախտումներ, մասնավորապես.

Վերը նշված պայմանագրով «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ն պարտավորվել է, մինչև 2025թ.-ի հոկտեմբերի 19-ը, ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությանը մատուցել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ, սակայն մինչ օրս չի իրականացրել:

23.12.2025թ.-ին վերը նշված ծառայություն ընդունող պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացվել է զեկուցագիր 22.04.2025թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-25/6» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ:

Արդյունքում՝ «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել պայմանագրային պարտավորությունների էական խախտում՝ խախտվել է ծառայության մատուցման ժամանակացույցը, ուստի ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությունը **2025թ.-ի դեկտեմբերի 25-ին, միակողմանի լուծում է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ի միջև 22.04.2025թ.-ին կնքված ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-25/6» ծածկագրով պայմանագիրը՝ 1.980.000 (մեկ միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով,** ինչպես նաև պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Տեղեկացնում եմ, որ «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո յոթ բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 48.510 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 5.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 25.12.2025թ. և 9.990 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 5.3 կետի համաձայն):

Համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների՝ «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ն, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե կատարողը չի վճարում պայմանագրի և որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000664758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2026թ.-ի հունվարի 9-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 200.000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման

և 300.000 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ընդհանուր 500.000 ՀՀ դրամ, ապա «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2026թ.-ի հունվարի 9-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կենտրոնական մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ**

Կատարող՝ Տիրան Խաչատրյան,
ՀՀ ԱՆ ՔԿԾ ՆՏԱ բաժին,
Հեռ.՝ 060-37-12-80: